ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«13» հոկտեմբեր 2026թ. ՆՄՊ/418-Ա

ք. Արմավիր

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայության նոր կառուցված, հիմնանորոգված, շահագործման հանձնված և վերակառուցված պետական ոչ առևտրային կազմակերպություններում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի N12-Ն հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված հավելվածի 91-99-րդ կետերով սահմանված «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N2.2.4-016-17 սանիտարական կանոնների և նորմերի, շենքային պայմաններին ներկայացվող պահանջների կատարումը ստուգելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին (Ս. Սարգսյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել ստուգման ենթակա պետական ոչ

առևտրային կազմակերպությունների գործադիր մարմիններին՝ տնօրեններին և վարչատնտեսական մասի համակարգողներին:

3. Աշխատանքային խմբի ղեկավարին (Ս. Սարգսյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների կատարման մասին պարբերաբար զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Աշխատանքային խմբի ղեկավարին (Ս. Սարգսյան)՝ յուրաքանչյուր պետական ոչ առևտրային կազմակերպությունում ստուգումն ավարտելուց հետո մեկօրյա ժամկետում կազմել տիրող իրավիճակի վերաբերյալ արձանագրություն:
5. Աշխատանքային խմբի ղեկավարին (Ս. Սարգսյան)՝ անհրաժեշտության դեպքում սույն որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբում ներգրավել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:
6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը (գլխավոր մասնագետ՝ Ա. Համբարձումյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների կազմակերպման համար տրամադրել ծառայողական հերթապահ ավտոմեքենա:
7. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Ա. Գրիգորյանին:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Восстановимая подпись **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179